

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրմանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 1187-Ն որոշման 4-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. մայիսի 3-ի թիվ 478-Ն հրամանով հաստատված «Պետական բաժնեմասի /բաժնետոմսերի/ կառավարման լիազորված մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովի անդամների /վերստուգողների/ ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման ու մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջների /չափանիշների/ մասին», կարգի 2-րդ գլխի պահանջները

**որոշում եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա», պետական փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման մրցութային հանձնաժողովի կազմը՝ Ստեփանյան Գագիկ /մարզպետի տեղակալ/, Թաթարյան Յուրա /մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ/, Մուշեղյան Յուրա /մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ/, Ստեփանյան Ռուբիկ /մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ/, Զոհրաբյան Արմեն /մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ/, Մաթևոսյան Նորիկ /մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ/, Սահակյան Դավիթ /մարզպետի տեղակալի օգնական/:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Գ. Ստեփանյանին, տեղակալ՝ Յու. Թաթարյանին, քարտուղար՝ Ա. Զոհրաբյանին:

3. Մրցութային հանձնաժողովի նախագահի, տեղակալի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ